Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ U7343001788

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
4	Մարտ	2018 թ.		Ա	7343001788
[4] Մատակարարման ամսաթիվ					
28	Փետրվար	2018 թ.	Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X»)	հատուկ	Հշգրտվող հաշվի Սերիա / Համար
					Հշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար		
			[7]	
			[8]	
			[9]	

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

BAN 119015008, Invoice 101109858432

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 5 0 0 0 5 2
[12] Անվանումը	"ՎԵՐՈՆ Արմենիա" ՓԲԸ
[13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 2 5 0 0 0 5 2 . 1
[14] Բանկային տվյալները	Հայէկոնոմբանկ N 163004038861
[15] Գտնվելու վայրը (հասցեն)	ՀՀ, ք. Երևան 0014, Ահարոնյան 2
[16] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 4 0 0 0 0 8 2
[18] Անվանումը	ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ
[19] Բանկային տվյալները	N
[20] Գտնվելու վայրը (հասցեն)	ք. Վեդի,Արարատ,Արարատ փ. Խանջյան 67
[21] Լրացուցիչ տվյալներ	
[22] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր քանակը (ծավալաչափը)	Միավորի գինը	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Հեռահաղորդակցության ծառայություններ 02.2018				4166.67	20	833.33	5000
Ընդամենը					4166.67	X	833.33	5000

Հաշիվը ուղարկված է Պետեկամուտների կոմիտե

Ստացող HOVHANNISYAN SEROZH 1801920419

անուն, ազգանուն

04/03/2018 07:39:54

07/03/2018 13:37:41

ստաց. - 07.03.18
գրանց. - 07.03.18

1112

5213
04.04

Beeline

HI-LINE ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԵՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պ.Հ. 11901508

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀՀ 15/03/2017201_թ.

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն, այսուհետ «Օպերատոր», ի դեմս Մկրտչյան Տաթևիկ մի կողմից և _____ այսուհետ՝ «Բաժանորդ» ի դեմս _ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ մյուս կողմից, երկուսը միասին, այսուհետև՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկա

1.1 Սույն պայմանագրով Օպերատորը Բաժանորդին մատուցում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության Hi-Line ծառայություն (այսուհետ՝ "Ծառայություն") Օպերատորի կողմից սահմանված սակագներով, որոնք ներկայացվում են Օպերատորի www.beeline.am ինտերնետային կայքում:

1.2 Սույն պայմանագրի կնքման պահին Բաժանորդը օգտագործում է Օպերատորի Հանրային էլեկտրոնային հաղորդակցության համակցված ցանցի 7423444101հեռախոսահամարի տակ գործող բաժանորդային գիծը Hi-Line ծառայությունը ստանալու համար:

1.3 Hi-Line ծառայությունից օգտվելու ժամանակահատվածում Բաժանորդին տրամադրվում է իդենտիֆիկացիոն ժամանակավոր 7400301097 համարը:

1.4 Սույն պայմանագրի շրջանակներում Բաժանորդի կողմից ընտրվել է 5000սակագնային փաթեթի 4ՄԲ արագությունը, որի ամսական գինը կազմում է Սթրիմ դրամ (ներառյալ ԱԱՀ):

1.5 Ծառայության արագությունները գործում են բաշխման (SHARED) սկզբունքով:

1.6 Եթե սույն պայմանագիրը կնքելու հետ մեկտեղ Բաժանորդին տրամադրվում է վերջնակետային սարքավորում, ապա Բաժանորդի վրա տարածվում են սույն Պայմանագրի 5-րդ բաժնում նախատեսված "Վերջնակետային սարքավորումն օգտագործման հանձնելու մասին" պայմանները:

2 Օպերատորի իրավունքներն ու պարտավորությունները

2.1 Օպերատորը պարտավոր է բաժանորդի հեռախոսահամարին ծառայությունն ակտիվացնել սույն պայմանագիրը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվի առնելով առկա տեխնիկական հնարավորությունները:

2.2 Օպերատորը պայմանագրի կնքման օրվանից մեկ ամսվա ընթացքում իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ծառայության մատուցումը ընդհանրապես կամ Բաժանորդի կողմից ընտրված սակագնային տարբերակի պայմաններով տեխնիկապես հնարավոր չէ:

2.3 Օպերատորը իրավունք ունի սահմանել պայմանագրի լուծման ժամանակ վերջնահաշվարկի հատուկ կանոններ՝ Բաժանորդի կողմից պայմանագրի լուծման պահին օգտագործվող սակագնային փաթեթի պայմաններին համապատասխան:

3. Բաժանորդի իրավունքներն ու պարտավորությունները

3.1 Բաժանորդը պարտավոր է մատուցված Hi-Line ծառայության դիմաց համաձայն գործող սակագների հաշվարկված գումարը վճարել հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ:

3.2 Ծառայությունից օգտվելու համար Բաժանորդը կարող է օգտագործել սեփական սարքավորումները, որոնք պետք է համատեղելի լինեն Օպերատորի ցանցի հետ:

4. Ծառայությունների կասեցում և Պայմանագրի լուծման կարգը

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է այնքան ժամանակ մինչև կողմերից մեկը չնախաձեռնի պայմանագրի լուծումը:

4.2 Հաշվարկային ամսվա ընթացքում սույն պայմանագրի լուծման դեպքում Բաժանորդը պարտավոր է ընթացիկ ամսվա Hi-Line անսահմանափակ սակագնային փաթեթի համար վճարել Օպերատորի կողմից տրամադրված ծառայության օրերին համապատասխան:

4.3 Մատուցված ծառայության դիմաց սույն պայմանագրի 3.1-րդ կետում սահմանված ժամկետներում Բաժանորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Օպերատորի կողմից

eline

Բաժանորդին մատուցվող ծառայությունը ժամանակավորապես կասեցվում է: Կասեցման ժամանակահատվածի համար ծառայության գումարը հաշվարկվում է և ենթակա է վճարման:

4.4 Ծառայության կասեցման ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ բաժանորդի կողմից վճարում չկատարելու դեպքում ծառայության մատուցումը դադարեցվում է, և պայմանագիրը լուծվում է առանց ծանուցման:

4.5 Սույն պայմանագրի գործողությունը դադարեցվում է առանց ծանուցման Hi-line ծառայության մատուցման համար օգտագործվող ֆիքսված հեռախոսագծի ապամոնտաժման պարագայում՝ ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրի լուծման դեպքում:

4.6 Սույն պայմանագիրը կարող է լուծվել՝

4.6.1 Բաժանորդի նախաձեռնությամբ՝ այդ մասին Օպերատորին նախօրոք 10 աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելու պայմանով:

4.6.2 Օպերատորի նախաձեռնությամբ՝

4.6.2.1 Բաժանորդի կողմից սույն պայմանագրի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում,

4.6.2.2 Տեխնիկական պատճառներով ծառայությունը մատուցելու անհնարինության դեպքում՝ նախօրոք գրավոր ծանուցելու պայմանով:

4.6.2.3 Բաժանորդի բնակության/գտնվելու վայրում տեղադրված ֆիքսված հեռախոսագծի բաժանորդի կողմից ծառայությունն իր բաժանորդային գծի միջոցով ստանալու դիմումը բավարարելու դեպքում

4.7 Բաժանորդի կողմից չվճարման պատճառով կասեցված ծառայությունը մինչև Օպերատորի նախաձեռնությամբ սույն պայմանագրի լուծումը Բաժանորդի կողմից վճարումները կատարելուց հետո վերաակտիվացվում է 0 դրամ սակագնով: Պայմանագրի լուծումից հետո Բաժանորդի հեռախոսագծին ծառայությունը ակտիվացվում է ընդհանուր հիմունքներով:

5. Վերջնակետային սարքավորումն օգտագործման հանձնելու մասին պայմաններ[1]

5.1 Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին ժամանակավոր օգտագործման հանձնել .մոդեմը . (գործարանային համարը, սերիան և այլ տեխնիկական պայմաններ), իսկ Բաժանորդը պարտավորվում է օգտագործել մոդեմը սույն գլխով սահմանված պայմաններին համապատասխան:

5.2 Մոդեմը տրամադրվում է սույն Պայմանագիրը կնքելու պահից սկսած 13 ամսվա ժամկետով՝ Բաժանորդին ծառայությունից օգտվելու հնարավորություն ընձեռելու նպատակով:

5.3 Մոդեմի գինը կազմում է . (_____) ՀՀ դրամ՝ներառյալ ԱԱՀ:

5.4Մոդեմի նկատմամբ Օպերատորի սեփականության իրավունքը պահպանվում է Պայմանագրի 5.2-րդ կետով սահմանված ամբողջ ընթացքում և դրանից հետո, բացառությամբ սույն Պայմանագրի 5.10-րդ կետով սահմանված մոդեմի վաճառքի գինը Բաժանորդի կողմից վճարելու և մոդեմի վաճառքի գործարքի փաստով պայմանավորված մոդեմի հանդեպ սեփականության իրավունքը վերջինին փոխանցվելու դեպքից: Բաժանորդին մոդեմ հանձնելու Օպերատորի պարտավորությունը համարվում է կատարված այն Բաժանորդին հանձնելու պահից: Մոդեմը Բաժանորդին հանձնելու պահից դրա պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը կրում է Բաժանորդը: Մոդեմը հանձնվում է դրա բոլոր պատկանելիքներով և դրան վերաբերող բոլոր փաստաթղթերով:

5.5 Օպերատորը պարտավոր է հանձնել մոդեմը սարքին վիճակում և պիտանի այն նպատակներին, որոնց համար սովորաբար օգտագործվում է:

5.6 Բաժանորդը պարտավոր է պահպանել մոդեմը սարքին վիճակում, կատարել մոդեմի անվտանգ շահագործման բոլոր հրահանգները և օգտագործել մոդեմն իր նշանակությանը համապատասխան:

5.7 Բաժանորդն իրավունք չունի մոդեմն օտարել, տրամադրել վարձակալության/ենթավարձակալության, գրավ դնել կամ հանձնել այն անհատույց օգտագործման համար:

5.8Բաժանորդը, մոդեմի թերությունների և/կամ անսարքությունների հայտնաբերելու դեպքում, պարտավոր է դիմել մատակարարողի սպասարկման կենտրոն և հանձնման-ընդունման ակտով փոխանցել մոդեմը՝ զննություն և/կամ փորձաքննություն կատարելու համար: Այն դեպքում, երբ թերությունը առաջացել է ոչ Բաժանորդի մեղքով, Բաժանորդն իրավունք ունի Օպերատորից իր

eline

հայեցողությամբ պահանջել, ողջամիտ ժամկետներում անհատույց վերացնելու մոդեմի թերությունները կամ մոդեմը փոխարինել պատշաճ վիճակում գտնվող այլ նմանօրինակ մոդեմով:

5.9 Օպերատորն իրավունք ունի հրաժարվել թերի կամ անսարք մոդեմը փոխարինելուց կամ թերությունները և/կամ անսարքությունները իր հաշվին վերացնելուց, եթե մոդեմի զննության կամ փորձաքննության արդյունքում կպարզվի, որ մոդեմի թերությունները և/կամ անսարքությունները առաջացել են Բաժանորդի մեղքով: Այդ դեպքում Օպերատորն իրավունք ունի իր հայեցողությամբ Բաժանորդից պահանջել հատուցելու մոդեմի թերությունները վերացնելու ծախսերը կամ պահանջել վնասների հատուցում սույն Պայմանագրի 5.3 կետում նշված արժեքի չափով:

5.10 Սույն Պայմանագիրը 5.2-րդ կետում նշված ժամկետից հետո Բաժանորդի նախաձեռնությամբ լուծելու դեպքում Բաժանորդը պարտավոր է Օպերատորին վերադարձնել մոդեմը սարքին վիճակում բոլոր պատկանելիքներով: Մոդեմը չվերադարձնելու դեպքում Բաժանորդը պարտավոր է վճարել մոդեմի վաճառքի գինը՝ 4000 (չորս հազար) դրամի չափով՝ ներառյալ ԱԱՀ և մոդեմը կհամարվի Օպերատորի կողմից Բաժանորդին վաճառված:

5.11 Սույն Պայմանագիրը 5.2 – րդ կետում նշված ժամկետից շուտ Բաժանորդի կողմից լուծելու, ինչպես նաև սույն Պայմանագրի պահանջները խախտելու հետևանքով Օպերատորի կողմից այն լուծելու դեպքերում Բաժանորդը Օպերատորին պարտավոր է Պայմանագիրը լուծելու հետ մեկտեղ վճարել 5.3-րդ կետում նշված մոդեմի գինը:

5.12 Սույն Պայմանագրի 5-րդ բաժնում սահմանված ժամկետում և կարգով մոդեմը չվերադարձնելու և/կամ դրամական պարտավորությունները չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ մոդեմը վերադարձնելու և/կամ ընդհանուր պարտքի գումարը բռնագանձելու պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագիրը կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու դեպքում Ընկերությունն կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անհատական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը:

* Այս բաժնի պայմանները կիրառվում են միայն այն բաժանորդների նկատմամբ, որոնք սույն Պայմանագիրը կնքելով ձեռք են բերել մոդեմ:

6. Այլ պայմաններ

6.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագիրը Օպերատորի կողմից կարող է կնքվել և ստորագրվել կնիքի և ստորագրության ֆաքսիմիլային վերարտադրությամբ:

6.2 Սույն պայմանագրի պայմանները միակողմանիորեն կարող են փոփոխվել Օպերատորի նախաձեռնությամբ՝ մեկ ամիս առաջ բաժանորդին գրավոր ծանուցելու միջոցով:

6.3 Սույն Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման պայմանները՝ ներառյալ սակագնային տարբերակները (սակագնային փաթեթները), կարող են փոփոխվել Օպերատորի հրապարակային օֆերտան Բաժանորդի կողմից ցանկացած եղանակով ակցեպտավորելու միջոցով:

6.4 Ծառայության մատուցման լրացուցիչ և/կամ հատուկ պայմանները, ներառյալ բայց չսահմանափակված առանձին սակագների, սակագնային փաթեթների և Օպերատորի կողմից առաջարկվող կոմերցիոն այլ առաջարկների պայմաններով, հրապարակվում են Օպերատորի պաշտոնական www.beeline.am կայքում:

6.5 Hi-Line ծառայությունը Բաժանորդին է մատուցվում վերջնական օգտագործման համար և նախատեսված չէ Բաժանորդի կողմից այն երրորդ անձանց առաջարկելու/վերավաճառելու համար:

6.6 Բաժանորդի կողմից սույն պայմանագրից առաջացած դրամային պարտավորությունները սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի պարտքերը բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցները, ներառյալ դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել կամ իրավունքը իրագործումը հանձնարարել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագիրը կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու կամ իրավունքի իրագործումը երրորդ անձանց հանձնարարելու դեպքում Օպերատորը կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար

նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անձնական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց գիջվել է պահանջի իրավունքը և/կամ հանձնարարվել է իրավունքի իրագործումը:

7. Բաժանորդի տեղեկությունների գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը

7.1 Օպերատորը պարտավորվում է ձեռնարկել բոլոր միջոցները սույն պայմանագրի շրջանակում Բաժանորդի կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները համարել և պահել գաղտնի: Օպերատորը իրավասու է բացահայտել այդ տեղեկությունները օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

7.2 Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու նպատակով Օպերատորի կողմից իր անձնական տվյալները մշակելու, օգտագործելու, ինչպես նաև դրանք և սույն պայմանագրի 7.1 կետում նշված տվյալները երրորդ անձանց /ներառյալ՝ այլ երկրներ/ փոխանցելու վերաբերյալ: Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը հավաստում է, որ Օպերատորի կողմից ծանուցված է Բաժանորդի անձնական տվյալները մշակելու Օպերատորի մտադրության, մշակման իրավական հիմքերի, նպատակի ինչպես նաև "Անձնական տվյալների պաշտպանության մասին" ՀՀ օրենքով նախատեսված ծանուցմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին:

7.3 Սույն Պայմանագիրը կնքելով Բաժանորդը տեղեկացվում է, որ Օպերատորը կարող է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով վարկային բյուրոներին տրամադրել Բաժանորդի կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկություններ: Օպերատորը պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված տեղեկությունների բացահայտման հետևանքով պատճառված որևէ վնասի իրավական հետևանքի համար:

7.4 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու պահից:

7.5 Սույն պայմանագիրը կնքված է երկու հավասարազոր օրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

«Օպերատոր»
«Արմենտել» ՓԲԸ
Մկրտչյան Տաթևիկ

«Բաժանորդ»
_ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ
/բաժանորդի անուն, ազգանուն, ստորագրություն/
_____
/բաժանորդի էլեկտրոնային հասցե/

Հաստատումեմ, որ սույն Պայմանագրով ծառայությունից բացի ձեռք եմ բերել նաև Պայմանագրում նշված մոդեմը
_ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ
/բաժանորդի անուն, ազգանուն, ստորագրություն/